ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱԿՆԱՐԿՆԵՐ
(հնագույն ժամանակներից մինչև XX դ. վերջը)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
183

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
183

ԵՐԵՎԱՆ – 2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 537

Հրատարակվում է ՀՀ Սփյուռքի
նախարարության աջակցությամբ

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Մելքոնյան Աշոտ
Մ 537 Հայոց պատմության ակնարկներ (հնագույն ժամանակներից մինչև XX դ. վերջը) / Ա. Մելքոնյան.- Եր.:
ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2018. – 412 էջ:

Ձեռնարկը ներկայացնում է «Հայոց պատմության» ակնարկը՝ հնագույն ժամանակներից մինչև XX դ. վերջը: Գրքում տեղ են գտել Հայաստանի պատմության առավել կարևոր և հանգուցային խնդիրների վերաբերյալ վերջին տասնամյակներին հայ պատմագիտության մոտեցումները:

Նախատեսված է բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության, հայաստանյան և սփյուռքյան դպրոցների աշակերտության և ընթեցրող հասարակայնության համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-75-6 © ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի հազարամյակների պատմության վերաբերյալ ստեղծվել են բազմաթիվ դասագրքեր: Առաջին դասագիրքը եղել է Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որով մինչև XVIII դ. վերջը կրթվել ու դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ: XVIII դ. վերջերից կիրառություն գտավ նաև նշանավոր պատմաբան, Մխիթարյան միաբանության անդամ, հայր Միքայել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը»: Հետագայում լույս տեսան Հայաստանի ամբողջական և համաշխարհային պատմությունը ներկայացնող այլ հեղինակների՝ հայր Ղուկաս Ինճիճյանի, Ստեփան Պալասանյանցի, Անտոն Գարագաշյանի և այլոց ծանրակշիռ աշխատությունները: Դրանցից շատերն այսօր էլ շարունակում են ծառայել մեր հայրենիքի ու ժողովրդի պատմության ուսումնասիրության նվիրական գործին:

Այդուհանդերձ, մեր օրերում, երբ միլիոնավոր հայեր շարունակում են ապրել ոչ միայն Հայրենիքում, այլ նաև աշխարհի տասնյակ երկրերում, հրամայական է դառնում համահայկական դասագրքերի ստեղծումը, որը մեծ նշանակություն կունենա մեզանում միասնական ու հայաստանակենտրոն մտածողություն և պետական զգացողություն ձևավորելու հարցում: Այդ իմաստով առավել կարևոր է հայոց պատմության, հայոց լեզվի ու գրականության, հայ մշակույթի միասնական դասագրքերի հրատարակությունը:

Ընթերցողների լայն շրջանակներին, հատկապես պատանիներին ու երիտասարդությանը հասցեագրված սույն ձեռնարկը վերոհիշյալ խնդրի կենսագործման հարցում ևս

կարող է օգտակար լինել: Այն համառոտակի ներկայացնում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ վաղնջական ժամանակներից մինչև XX դարի վերջը: Ձեռնարկը բաղկացած է չորս բաժիններից, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է մի դարաշրջան: Առաջին բաժինը նվիրված է հին դարերի պատմությանը՝ ամենավաղ ժամանակներից մինչև III դարի վերջը: Երկրորդ մասը միջնադարյան Հայաստանի պատմությունն է, որն սկսվում է 301 թ.՝ հայոց քրիստոնեական դարձով և ավարտվում XVII դարի կեսերին: Դասագրքի երրորդ բաժինը՝ Նոր պատմության շրջանը, ընդգրկում է հայ ազգային-ազատագրական պայքարի փուլը, որը եզրափակվում է 1918 թ. մայիսին թուրքերի դեմ ուղղված հերոսամարտերով և հայոց պետականության վերականգնման պատմական իրադարձությամբ: Վերջին հատվածը մեր Նորագույն պատմությունն է, որը ներառում է նոր պետականության փուլերը՝ 1918 թվականից մինչև XX դարի վերջը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ դասագրքում օգտագործվել են հրապարակի վրա եղած մասնագիտական գրականությունը, բուհական դասագրքերը, ինչպես նաև վերջին տարիներին հրատարակված դպրոցական դասագրքերի, ձեռնարկների նյութերը, վիճահարույց հիմնախնդիրների վերաբերյալ պատմագիտության ձեռքբերումները: Ձեռնարկի բազմաթիվ հայեցակարգային մոտեցումներ տեղ են գտել համացանցում Հայկական վիրտուալ համալսարանի կայքէջում սույն գրքի հեղինակի ներկայացրած տեքստերում:

Գլուխ առաջին
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայ ժողովրդի հայրենիք Հայկական լեռնաշխարհը երկրագնդի վրա մարդային հասարակության ձևավորման հնագույն օրրաններից է: Այն նաև արիական-հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքն է, որտեղ ժամանակի ընթացքում տեղի է ունեցել նրանց տրոհման ու աշխարհով մեկ տարածման գործընթացը: Արդեն Ք.ա. III–II հազարամյակներում լեռնաշխարհում հանդես են եկել առաջին պետական կազմավորումները՝ Արատտա, Արմե-Շուբրիա, Հայասա, էթիունի, Նաիրի և այլ անուններով: Ք.ա. IX դարում ասպարեզ է իջել Վանի (Ուրարտու) միասնական թագավորությունը, որը դարձել է տարածաշրջանի հզորագույն երկրներից մեկը, հասել տնտեսական ու մշակութային անանախադեպ բարձրության:

Հայկական պետականությունը զարգացում է ապրել Երվանդականների և Արտաշեսյանների օրոք: Հայաստանում տարածում է գտել հելլենիստական հարուստ մշակույթը: Տիգրան II Մեծի գահակալության շրջանում (Ք.ա. 95–55 թթ.) Մեծ Հայքի թագավորության սահմանները Կասպից ծովից հասել են Միջերկրական ծով ու Եգիպտոս: Երբեմնի հզոր Պարթևական թագավորության տիրակալները հօգուտ Տիգրան Մեծի հրաժարվել են «արքայից արքա» պատվատիտղոսից: Այդ տիտղոսը ժառանգաբար անցել է Տիգրանի հաջորդներին: Արտաշեսյանների հիմնած Արտաշատն ու Տիգրանակերտը պատվավոր տեղ են գրավել Հին աշխար-

հի ընդարձակ ու գեղեցկագույն քաղաքների շարքում:

Ք.հ. I դարում շարունակվել է հռոմեապարթևական մրցակցությունը Հայաստանի համար: Հայոց գահը 66 թ. անցել է Պարթև Արշակունիներին, որոնք ժամանակի ընթացքում հայացել են և դարձել հայկական նշանավոր արքայատոհմերից մեկը: Առաջին Արշակունիների օրոք հիմնադրվել են Գառնիի հեթանոսական տաճարը, Մծուրք և Վաղարշապատ քաղաքները:

II–III դարերում հայ ժողովուրդը չի դադարեցրել պայքարը Հռոմեական կայսրության, ապա նաև՝ Սասանյան Պարսկաստանի դեմ: Հռոմեապարթևական մրցակցությունն ավարտվել է 298 թ. Մծբինում կնքված քառասնամյա խաղաղության պայմանագրով, որի համաձայն Տրդատ III Արշակունին ճանաչվել է Մեծ Հայքի թագավոր:

I–III դարերի ընթացքում Հայաստանում, հատկապես Փոքր Հայքում ձևավորվել և հետզհետե տարածվել են քրիստոնեական նորանոր համայնքներ: